



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 29 - Ա

07 փետրվարի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.2-րդ, 1.6-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 19-ի N 1797-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. Մարզպետի և մարզպետի տեղակալների միջև կատարել աշխատանքի բաժանում ըստ բնագավառների.

1) մարզպետ՝

- ա. ֆինանսներ, հարկային մարմիններ
- բ. տեղական ինքնակառավարման մարմիններ
- գ. քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ-տնտեսություն
- դ. տրանսպորտ և ճանապարհաշինություն
- ե. ազգային անվտանգություն և վարժական հավաքներ
- զ. զինապարտների հաշվառման, զորակոչի և զորահավաքի կազմակերպման խնդիրներ
- է. ներքին աուդիտ

2) մարզպետի տեղակալ Ա. Հակոբյան՝

- ա. կրթություն, մշակույթ և սպորտ
- բ. առողջապահություն և սոցիալական ապահովություն
- գ. զարգացման ծրագրեր, առևտուր, հանրային սնունդ և սպասարկում
- դ. զբոսաշրջություն, միջազգային համագործակցություն և արտաքին կապեր
- ե. ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

3) մարզպետի տեղակալ Մ. Մանուկյան՝

- ա. գյուղատնտեսություն և բնապահպանություն
- բ. հողօգտագործում և հողաշինարարություն
- գ. ԱԻ և ՔՊ հարցեր

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ